ների ընթացքում միևնոյն այդ գիւղաքաղաքի բնակիչների թիւը հասել է 800-ի, որ շատ չնչին տոկոս է։ Ուստի մասնաւորապէս Նուխու այժմեան փոխանորդ բարձրաց. Սիօն վարդապետի և ընդհանրապէս Ս. Էջմիածնի ու Ն. Ս. քաղցր ուշադրութիւնն եմ հրաւիրում Նուխու գաւառի այս վայրենի և մանաքեր սովորութեան արմատախիլ անելու վերաբերութեամբ։ Իսկ Թիֆլիզի Ներսիսեան Հոգևոր դպրանոցի և Գևորգեան ճեմարանի վարչութիւնները շատ գեղեցիկ գործ կատարած կլինէին, եթէ այդ դժբախտ երկրի, թանձր խաւարի և տգիտութեան մէջ թաղուած Հայ ժողովրդի ընդունակ և սրամիտ զաւակներից իւրաքանչիւր տարի տասնեակ պատանիներ ընդունէին իրենց լուսաւոր յարկի տակ և կրթէին նրանց սիրտն ու հոգին այժմեան գիտութեանց կենսատու լուսով։ Յուսանք և սպասենք։

Զ

ՈՒՏԻԱՑԻ ՀԱՅԵՐԻ ԱՆՆՄԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆՏԻՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուտիացի Հայը ջերմ սրտանց սիրում է իւր հայրենի օջաղը, իւր տունն ու տեղը, իւր հողն ու ջուրը, իւր թաւոտ անտառներն ու դաշտերը, իւր վարելահողերն ու մարգագետինները և իւր պաշտելի սրբավայրերը։ Այնպէս որ նա ուրիշ օտար երկիր երբէք չի գնայ և ոչ մի պայմանով